




ԵՊՀ-ում Սերգեյ Սայադովը ներկայացրեց «Հայազգ» ռուսալեզու համացանցային հայագիտական հանրագիտարանը

| Տպել |

Հինգշաբթի, 11 Հուլիս 2013 21:32

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտն այսօր հանդիպում էր կազմակերպել Դոնի Ռոստովի «Նոր Նախիջևան» հայկական համայնքի գործադիր տնօրեն, նորաբաց հայագիտական կենտրոնի տնօրեն Սերգեյ Սայադովի հետ: Առիթը հայագիտական կենտրոնի տնօրենի հեղինակած «Հայազգ» ռուսալեզու համացանցային ամենամեծ հայագիտական հանրագիտարանն էր (րու.հայազգ.ինֆո), որն ապագայում, ի դեպ, նախատեսվում է դարձնել բազմալեզու:



Սերգեյ Սայադովը, ով 30 տարի է զբաղվում է հայագիտական հարցերով, ներկայացրեց հանրագիտարանը՝ նշելով, որ դրանում ընդգրկված են հայոց պատմությանը, մշակույթին, հասարակական կյանքին և հայագիտական բազմաբնույթ այլ թեմաների առնչվող հոդվածներ:

«Մա ոչ թե հանրագիտարան է, այլ ճանապարհային քարտեզ հայերի մասին: Էլեկտրոնային կատալոգ է՝ ընտրության մեծ հնարավորությամբ», - ասաց նա և հավելեց, որ կայքում, բացի հոդվածներից, կարելի է գտնել էլեկտրոնային գրքեր, ֆիլմեր, աշխարհի թանգարաններ, որոնք ինչ-որ կերպ առնչվում են հայերի ու Հայաստանի հետ:

Սերգեյ Սայադովը «Հայազգին» և «Վիկիպեդիային» միջև գուգաիտներ անցկացրեց և նշեց, որ «Վիկիպեդիային» հիմնական կանոնն իրեն դուր չի եկել, այն է՝ բաց է խմբագրելու համար և ցանկացած մարդ կարող է մտնել ու փոփոխություններ անել հոդվածում:

Խոսելով կայքի այցելությունների մասին՝ Սերգեյ Սայադովը նշեց, որ այն տարեկան 25%-ով աճում է, ասկայն ընդգծեց, որ իրենք կայքի գովազդով չեն զբաղվում:

«Էլեկտրոնային հանրագիտարանը պարբերաբար թարմացվում է և 2013-ի դրությամբ ունի շաբաթական 25 000 այցելություն», - ասաց նա և տեղեկացրեց, որ այցելությունների աշխարհագրությունն ընդգրկում է Ռուսաստանը՝ 58%, Հայաստանը 22%, Ուկրաինան 7%, ինչպես նաև ԱՄՆ-ը, Բելառուսը, Ղազախստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Իսրայելը, Թուրքիան և նաև Ադրբեյջանը:

Կայքի հեղինակը նաև նշեց, որ ինքը հանդիպումներ է ունեցել ՀՀ Սփյուռքի նախարարությունում, ուր կարևորել են համահայկական էլեկտրոնային կայքի գործունեությունը և ընդունել, որ այն կարող է լավ խթան հանդիսանալ աշխարհով մեկ սփռված հայությանը համախմբելու հարցում:

tert.am

Like Share 0

Share